

յաճախ կը յաջողին զանոնք օգտագործել ի նպատակ իրենց առաքելութեանց: Իսկ Պարսկաստանի հետ Գրանսայի և Ս. Աթոռին բարւոք յարաբերութիւնները քաջութիւն կու տան անոնց ի հարկին պաշտպան կանգնելու Քրիստոնէութեան: Այսպէս, ի լուր իսլամացումի արարքներուն, անոնք կը բողոքեն, ի պաշտպանութիւն Քրիստոնէութեան, և երբեմն կը յաջողին (8): Նախիջեվանի մէջ ա՛յնչափ ազդու կ'ըլլայ անոնց միջամտութիւնը, որ ժամանակ մը կ'ապահովեն Շահին անմիջական հովանաւորութիւնը տեղւոյն կաթողիկէներուն վերայ (9):

Այս քարոզիչները փնտռուած էին առաւելաբար իբրեւ գիտնականներ և բժշկներ (10): Անոնց ազդեցութեան տակ, և մասնաւորապէս Հ. Պօղոս Բիրոմալլիի, Հ. Կղեմէս Կալանոսի, Հ. Շեզոյի, Հ. Ռոշի, Հ. Ռուի, Հ. Ժաք Վիլլոդի օժանդակութեամբ՝ մշակութային շարժումը տակաւ կը զօրանայ և կաթողիկէ հաւատքը կը վերազարթնու հայ կղերին մէջ (11), որ

(8) A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII and XVIII centuries, Tom. I, p. 366.

(9) Անդ. Tom. II, 1304—1306.

(10) Chardin, T. VI, pp. 154—155.

(11) P. de Damas, Անդ. 113. 135-136. Լեո, Հայոց Պատմ. Անդ. 326—330, 335, 973.